ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվար 2022 թվականի № 2814-Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք. Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 306.12 ՔՄ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-2955-0001)
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետերով, 29-րդ կետի 1-ին ենթակետով, 34-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի ք. Մ. Խորենացու փողոցի հարևանությամբ գտնվող 306.12 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-2955-0001) տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 33/26:



Недействительная подпись



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվար 2022 թվականի № 2813-Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք. ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ 7/4 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0170-0058) ԵՎ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ 7/5 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0170-0057) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Աղաջան Հովսեփյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №23911 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի ք. Բուլվարային փողոց 7/4 (կադաստրային ծածկագիր 08-001-0170-0058) և Բուլվարային փողոց 7/5 (կադաստրային ծածկագիր 08-001-0170-0057) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 7/4:



Недействительная подпись


X

CB



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի



2022թ. ք.Գլուկնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » հեկտեմբեր 2022 թվականի № 281-Ա

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 270/7 ՀԱՅՏԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՀՈՂԱՄԱՍԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0759-0064) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ
ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՅՏԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացիներ Գոռ Հարոյանի և Անի Խաչատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 69469 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՒՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- 1) 156.9 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 270/7:
- 2) 5.1 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 270/11:



Недействительная подпись

X

(Signature)



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվարի 2022 թվականի N 2810-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 62/8
ՀԱՍՑԵԻ 4.12 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովայի փողոցի N 13/1 հասցեի 67.76 (վաթսույոթ ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ռուզաննա Փայլակի Նալբանդյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 05082020-08-0005 վկայական):

Քաղաքացի Ռուզաննա Փայլակի Նալբանդյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25112022-08-0023 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոցի N 62/8 հասցեի 4.12 (չորս ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 253-Ա որոշումը և քաղաքացի Ռուզաննա Փայլակի Նալբանդյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հոկտեմբերի 03-ին N 17718 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Քաղաքացի Ռուզաննա Փայլակի Նալբանդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովայի փողոցի N 13/1 հասցեի 67.76 (վաթսույոթ ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով սպասարկման օբյեկտին հարակից, Ռուսթավելու փողոցի N 62/8 հասցեի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 4.12 (չորս ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ սպասարկման օբյեկտի ընդլայնման նպատակով:
- Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 102543 (մեկ հարյուր երկու հազար հինգ հարյուր քառասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Ռուզաննա Փայլակի Նալբանդյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուզաննա Փայլակի Նալբանդյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



26.12.2022

[Handwritten signature]

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » *դեկտեմբեր* 2022 թվականի N 2809-Ճ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱԳԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈՔԱՆԻՆ ԵՎ ԻՐԻՆԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱԿՈՔԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆՂԻՅԱՆ ՓՈՂՈՑ N2/4 ՀԱՅՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 255.59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (219.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕՔՅԵԿՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 212.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Գագիկ Արտաշեսի Հակոբյանին և Իրինա Արամայիսի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղանղիյան փողոց N2/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցվել է 255.59(երկու հարյուր հիսունհինգ ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (219.57(երկու հարյուր տասնինը ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտ:

Քաղաքացիներ Գագիկ և Իրինա Հակոբյանները դիմել են նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հոդային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման >> կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացիներ Գագիկ և Իրինա Հակոբյանների դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N8139 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Գագիկ Արտաշեսի Հակոբյանին և Իրինա Արամայիսի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղանղիյան փողոց N2/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 255.59(երկու հարյուր հիսունհինգ ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (219.57(երկու հարյուր տասնինը ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 1183893 (մեկ միլիոն հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր ինսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գյումրի քաղաք Ղանղիյան փողոց N2/4 հասցեի 212.5 (երկու հարյուր տասներկու ամբողջ հինգ տասներորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակություն բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակություն հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:



26.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » դեկտեմբեր 2022 թվականի N 2808-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի Ի N 2533-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի <<Քաղաքացիներ Եզոր Մանուկյանին և Լաուրա Պողոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց N 18 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 15,66 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին>> N 2533-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափազրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 02/12/2022 թվականի N Կ-02122022-08-0072 որոշում): Ներկայացվել է նոր ճշտորված չափազորություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի <<Քաղաքացիներ Եզոր Մանուկյանին և Լաուրա Պողոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց N 18 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 15,66 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին>> N 2533-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<շինություն>> բառից հետո լրացնել << ինքնակամ բացված 1(մեկ)դուռ և ինքնակամ փակված 1(մեկ)դուռ>> բառերը և թվերը.

3) նախաբանում <<22 կետի>>թվից և բառից հետո լրացնել <<և 18-րդ կետի դ) ենթակետի>> թիվն ու բառերը.

4) որոշման 1-ին կետում <<30835 (երեսուն հազար ութ հարյուր երեսունհինգ) >> բառերը և թվերը փոխարինել << 34773 (երեսունչորս հազար յոթ հարյուր յոթանասուներեք)>> թվերով և բառերով:



22.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » դեկտեմբեր 2022 թվականի N 2804-Ն

ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍԻՆԵ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՆԴՐԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N10/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ 95.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (81.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ
ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Օդանավակայան 3-րդ թաղամաս N10/5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 95.07 (իննսունհինգ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (81.02(ութսունմեկ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի շինություն:

Քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնամ կառույցների օրինականացման և տնօրինման>> կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N21125 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Օդանավակայան 3-րդ թաղամաս N10/5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 95.07 (իննսունհինգ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (81.02(ութսունմեկ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 187193 (հարյուր ութսունյոթ հազար հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սահմանված կարգով քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարություն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:



22.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » դեկտեմբեր 2022 թվականի N 2806-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՐԳԻՍ ԱՍԵՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ
48/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ)
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Սարգիս Ասեսյանի 2022 թվականի դեկտեմբերի 12-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի դեկտեմբերի 12-ին 23603 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Սարգիս Ասեսյանին Գյումրի քաղաքի Գորկու 48/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ) ընդհանուր 1.32 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 12-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Սարգիս Ասեսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » դեկտեմբեր 2022 թվականի N 2805-Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱՔԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-Ի 2022 թվականի դեկտեմբերի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի դեկտեմբերի 19-ին 24008 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի վարչական տարածքում կանգառների վրա տեղադրել (տեղաբաշխել) պաստառներ ընդհանուր 150 քմ, և գովազդի վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) պաստառներ ընդհանուր 64,8 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հունվարի 15-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



23.12.2022

ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » փետրվարի 2022 թվականի N 2804 Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-Ի 2022 թվականի դեկտեմբերի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի դեկտեմբերի 19-ին 24006 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի վարչական տարածքում կանգառների վրա տեղադրել (տեղաբաշխել) պաստառներ ընդհանուր 150 քմ, և գովազդի վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) պաստառներ ընդհանուր 64,8 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2022 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



23.12.2022

ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք. Գյումրի



Հավելված

Հայաստանի Հանրապետության

Ծրարկի մարզի Գյումրի համայնքի

Ղեկավարի 2022 թ. *դեկտեմբերի 23-ի*

N 2804-Վ որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-Ի ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	Կանգառ/Հասցե	Քանակ	(քառ. մ)
1	Անկախության փողոց	1	12
2	Անկախության փողոց	1	12
3	Տերյան փողոց 1	1	7
4	Տերյան փողոց 2	1	7
5	Տերյան փողոց 3	1	7
6	Գարեգին Նժդեհի պողոտա 1	1	7
7	Գարեգին Նժդեհի պողոտա 2	1	7
8	Բազրատունյաց հր. Կիրովի կողմ	1	14
9	Հաղթանակի պողոտա	2	28
10	Երկաթգծի կայարան 1	1	14
11	Երկաթգծի կայարան 2	1	14
12	Երկաթգծի կայարան 2	1	14
ԸՆԴԱՄԵՆԸ		13	150

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ		
1	Սայաթ- Նովա փողոց	10	43,2
2	Ալեք Մանուկյան	5	21,6
ԸՆԴԱՄԵՆԸ		15	64,8



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » դեկտեմբեր 2022 թվականի N 2803-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈԼԵՅՐՈՒ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի տղամարդկանց 2022 թվականի դեկտեմբերի 25-28-ը Երևան քաղաքում կայանալիք բարձրագույն խմբի եզրափակիչ մրցումները Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2022 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի տղամարդկանց բարձրագույն խմբի եզրափակիչ մրցումները մասնակցելու համար 2022 թվականի դեկտեմբերի 25-28-ը -ը քաղաք Երևան գործուղել թվով 14 (տասնչորս) մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00 ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 23 » դեկտեմբեր 2022 թվականի N 2802 Է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԶԲՈՍԱԾՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ**

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների հատուկ կայանման և կանգառի վայրերը՝ համաձայն հավելված N 1,2,3,4,5:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի



ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ օգոստոսի 23 -ի թիվ 2802-Վ ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԶԲՈՍԱԾԵՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐ

Հ/Հ	Կայանման հասցեներ	Կանգառի հասցե
1.	Ղարսի խճուղի	Արուսյան փողոց՝ Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ
2.	Ղարիբջանյան խճուղի	
3.	Կայարանամերձ հրապարակին կից՝ Սևյան փողոց	



ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2022 թվականի փետր. 23-ի թիվ 28027 որոշման





ՀԱՎԵԼՎԱԾ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 280 ⁷⁶ որոշման





ՀԱՎԵԼՎԱԾ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 2802-76 ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ N 5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ դեկտ. 23 -ի ԹԻՎ 2802-Ղ ՈՐՈՇՄԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„23„ դեկտեմբեր 2022 թվական N 2801 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2001ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Խաչատուր Կոճիբրոյանը, Գյումրու քաղաքապետի 2001թվականի հունվարի 16-ի N 14 որոշման 30-րդ կետի մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հունվարի 16-ի «Գործարանային նրբանցքի 67 Ա /նախկին 67/ ամրացված շենքի բաշխման մասին» թիվ 14 որոշմամբ Յուրիկ Խաչատուրի Կոճիբրոյանի յոթ անձից բաղկացած ընտանիքին՝ Կոճիբրոյան Գրետա Կարապետի /կինը/, Կոճիբրոյան Վաչագան Յուրիկի /տղան/, Կոճիբրոյան Խաչատուր Յուրիկի /տղան/, Ուրմուտյան Գրետա Կարապետի /հարսը/, Կոճիբրոյան Քրիստինե Խաչատուրի /թոռը/, Կոճիբրոյան Անահիտ Խաչատուրի /թոռը/, ովքեր գրանցված բնակվել են ք. Գյումրի, Գործարանային նրբանցք 67 շենքի թիվ 5 երեք սենյականոց բնակարանում, երկրաշարժից հետո էլ բնակվել են 110/180, 110/044 ա ժամանակավոր կացարաններում, հատկացվել է ք. Գյումրի, Գործարանային նրբանցք 67ա շենքի /նախկին 67/, 1-ին մուտքի, 1-ին հարկի, թիվ 3 երեք սենյականոց բնակարանը:

Դիմումին կից ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքացիական կացության ակտերի գործակալության կողմից 2022թ.-ի հոկտեմբերի 5-ին տրված «Ամուսնալուծության մասին» պետական վկայականի կրկնօրինակը, համաձայն որի Սուսաննա Ավետիքի Ումուտյանի և Խաչատուր Յուրիկի Կոճիբրոյանի ամուսնությունը լուծարված է, դադարման ժամանակ՝ 2001թ.-ի հունվարի 23-ին:

«Գյումրի կենտրոն» համատիրության կողմից 2022թ.-ի նոյեմբերի 11-ին տրված տեղեկանքի համաձայն ք. Գյումրի, Գործարանային նրբանցք 67ա շենքի, 1-ին

մուտքի, թիվ 3 երեք սենյականոց բնակարանում հաշվառված բնակվում են Գրետա Կարապետի Կոճիբրոյանը, Վաչագան Յուրիկի Կոճիբրոյանը, Խաչատուր Յուրիկի Կոճիբրոյանը:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԱՎ վարչության Գյումրի քաղաքի անձնագրային խմբի կողմից տրված 2022թ.-ի հոկտեմբերի 20-ի գրության համաձայն Գյումրի քաղաքի Ա. Մանուկան փ. 1-ին նրբանցք /նախկին Գործարանային նրբանցք/ 67 ա շենքի թիվ 3 հասցեում ըստ Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի բազայի հաշվառված են Գրետա Կարապետի Կոճիբրոյանը, Վաչագան Յուրիկի Կոճիբրոյանը, Խաչատուր Յուրիկի Կոճիբրոյանը:

Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետարանի կողմից Գյումրու քաղաքապետի 2001թ.-ի հունվարի 16-ի թիվ 14 որոշման հիման վրա 2006թ.-ի մարտի 23-ին տրված թիվ 3 միասնական օրդերի /այսուհետ՝ Օրդեր/ մեջ նշված է, որ տղան, հարսը և թոռները բացակայում են քաղաքից, իսկ վերադառնալուց հետո կարող են գրանցվել, իսկ ամուսինը՝ Կոճիբրոյան Յուրիկը մահացել է 2002թ.-ի սեպտեմբերի 2-ին :

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 29.06.1993թ. ընդունված և 04.01.2007թ. ուժը կորցրած «ՀՀ պետական և հանրային բնակարանին ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների բնակարանների սեփականաշնորհումը՝ կամավորության սկզբունքով քաղաքացիներին բնակարանների /բնակելի տարածությունների/ անհատույց հատկացումն է: Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են սեփականաշնորհման սուբյեկտները, համաձայն որի՝ այդպիսիք են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները: Այսինքն՝ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան սեփականաշնորհման սուբյեկտ լինելու համար բավարար է, որպեսզի անձը մշտապես բնակվի Հայաստանի Հանրապետությունում և տվյալ բնակտարածությունում ունենա գրանցում: Տվյալ դեպքում, քաղաքացիներ՝ Գրետա Կարապետի Ուրմուտյանը /հարսը/, Քրիստինե Խաչատուրի Կոճիբրոյանը /թոռը/, Անահիտ Խաչատուրի Կոճիբրոյան /թոռը/ ըստ Օրդերի բացակայում են քաղաքից, իսկ ըստ վերոնշյալ տեղեկանքների հաշվառված չեն ք. Գյումրի Գործարանային նրբանցք 67 ա շենքի թիվ 3 բնակարանում, հետևաբար նշված հիմքերը բավարար է նշված անձանց ք. Գյումրի Գործարանային նրբանցք 67 ա շենքի թիվ 3 բնակարանի սեփականաշնորհման սուբյեկտների կազմից հանելու համար:

Քաղաքացիներ՝ Գրետա Կարապետի Ուրմուտյանը, Քրիստինե Խաչատուրի Կոճիբրոյանը, Անահիտ Խաչատուրի Կոճիբրոյանը Գյումրի քաղաքի ք. Գյումրի Գործարանային նրբանցք 67 ա շենքի թիվ 3 հասցեում ըստ Օրդերի մշտապես չեն բնակվել, գրանցում էլ չեն ունեցել, իսկ ըստ վերոնշյալ տեղեկանքների տվյալ հասցեում հաշվառում չունեն, ուստի նրանք «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով չէին կարող սեփականաշնորհման սուբյեկտ հանդիսանալ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը իրավական պետություն է:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014 թվականի թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ նշել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, որից հետևում է, որ քաղաքացիներ՝ Գրետա Կարապետի Ուրմուտյանին, Քրիստինե Խաչատուրի Կոճիբրոյանին, Անահիտ Խաչատուրի Կոճիբրոյանին Գյումրու քաղաքապետի 2001թվականի հունվարի 16-ի որոշմամբ չպետք է հատկացվեր Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք 67 ա շենքի թիվ 3 հասցեի բնակարանը: Նշված որոշումը խոչընդոտ է հանդիսանում ընտանիքի մյուս անդամների՝ հիշյալ բնակարանի սեփականաշնորհման իրավունքից օգտվելու օրինական ակնկալիքի իրավունքի պաշտպանության և գործնականում այդ իրավունքի իրացման համար, որոշմամբ սահմանված անձանց ցանկից քաղաքացիներ Գրետա Կարապետի Ուրմուտյանին, Քրիստինե Խաչատուրի Կոճիբրոյանին, Անահիտ Խաչատուրի Կոճիբրոյանին հանելը բնակարանի վարձակալ հանդիսացող և սեփականաշնորհման սուբյեկտին օրենքով ներկայացվող պարտադիր վավերապայմաններին համապատասխանող մյուս անձանց համար կանխատեսելի է դարձնում բնակարանը սեփականաշնորհելու իրենց օրինական և իրավաչափ ակնկալիքը:

Բնակարանի վարձակալ չհանդիսացող անձի՝ սեփականաշնորհման արդյունքում սեփականության իրավունք ձեռք բերելու իրավական խնդրին և դրա համար անհրաժեշտ վավերապայմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում: Մասնավորապես, թիվ ՎԴ/4729/05/08 վարչական գործով իր 30.04.2009 թվականի որոշման մեջ Վճռաբեկ դատարանն ամրագրել է. «Բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք 3 պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այն է՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, ինչպես նաև բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը»:


Հետագայում թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով իր 25.06.2010թ-ի որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, կաշկանդված չլինելով իր նախկին որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով և գործելով իրավունքի զարգացմանը նպաստելու իր գործառույթի շրջանակներում, ամրագրել է. «Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այդպիսիք են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը: Իր այս դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը շարունակաբար վերահաստատել է թիվ ՎԴ/4925/05/09, թիվ ՎԴ2/0127/05/10, թիվ ԵԱՔԴ/2487/02/10, թիվ ՎԴ/4957/05/09 գործերով կայացված որոշումներում՝ կատարելով հղում վերը հիշատակված թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով 25.06.2010 թվականի որոշմանը:

Բացի այդ, Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ Գրետա Կարապետի Կոջիբրոյանի ազգանունը՝ «Կոջիբրոյան» բառի փոխարեն գրվել է «Կոճիբրոյան» (հիմք՝ անձնագիր թիվ AU0337960, տրված 01.07.2021թ.-ին ՀՀ ոստիկանության 064-ի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Խաչատուր Կոճիբրոյանի 2022թվականի դեկտեմբերի 7-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2022թվականի դեկտեմբերի 7-ին N 23184թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հունվարի 16-ի «Գործարանային նրբանցքի 67 Ա /նախկին 67/ ամրացված շենքի բաշխման մասին» թիվ 14 որոշմամ 33-րդ կետում կատարել փոփոխություններ՝
 - 1) «Ուրմուտյան Գրետա Կարապետի –հարսը», «Կոճիբրոյան Քրիստինե Խաչատուրի– թոռը», «Կոճիբրոյան Անահիտ Խաչատուրի –թոռը» բառերը հանել:
 - 2) Գրետա Կարապետի Կոջիբրոյանի ազգանունը՝ «Կոճիբրոյան» բառը փոխարինել «Կոջիբրոյան» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչատուր Կոճիբրոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Handwritten signature of V. Samsonyan with a blue ink 'x' mark next to it.

Վ. Սամսոնյան